ՄԻԳ.

Սառաֆեանի կրած վշտերը տեղեկացնելէ վերջ՝ Նամակս կու տայ մէկ քանի քաղաքական լուրեր Պոլսոյ անցուդարձէն:

Յարգոյապատիւ և՛ գերապայծառ տեառն Ստեփաննոսի վրդ.ի
և Աբբայհօր խոնարհութեամբ որդւոյն սիրոյ ի Քրիստոս

Այս թուղթ ՀԳ.երորդ գիր է:

... եղև ինձ քանի մի անգամ երթալ ի տուն սառաֆօղլու Սարգիս վրդ.ին, որ յաւուրս յայսոսիկ հիւանդացաւ դեղին ցաւով, և այժմ յուսամք թէ ողջասցի փութով. և զի եկն զերծեալ ի բազում վշտաց ծովու և ցամաքի և ի հակառակութենէ սուտ եղբարց, խնդրէ զմխիթարութիւն ի մէնջ իբրև ի մտերմաց. և որպէս ինքն, նոյնպէս և մեք չգուշութեամբ գնամք յերթևեկութիւն միմեանց վասն հակառակաց: Նա պատմէ մեզ, թէ զիարդ այժմ իշխանք հայոց, որոց երևելին կոչի պազրկեանպաշը պետրոս, զղջացան և թողութիւն խնդրեցին վասն մասնակից լինելոյ իւրեանց մեղաց պատրիարքին առ ի աքսորել զսա, և են ընդ նմա գրգռութեամբ, և ի բանի են փոխել զնա յաթոռոյն: Սակայն Սարգիս վարդապետն առ ի կատարել զհրովարտակ թագաւորին հանդերձեալ է գնալ յեւդոկիայ ըստ կամելոյ պատրիարգին. և դեռ աստ է զչաքաթս ինչ, մինչև տեսցէ, թէ զինչ լինիցի բան ահագին սահակ վարդապետին, զոր փոխեցին ի կաթուղիկոսութենէ, և դնելոց են փոխանակ նորա զյակոբ վարդապետ ոմն աստապատեցի. և է նա այժմ ի կարին ի կարմիր վանս:... Լուաք աստ զմեծամեծ յաղթութիւնս մոսկովաց և գերմանացւոց ի վերայ պրուշաց եղեալ յօգոստոսի 12:... Յաւուրս յայսոսիկ կոխ եղև ի խասըմ փաշայ ի մէջ թէրսխանացւոց և խաղախորդաց, և անկան վիրաւորք յերկուց կողմանց վասն չարութեան կանանց. և հազիւ հասեալ էէնիչէրի աղասըն դադարեցոյց զպատերազմն, և կալեալ զբազումս և արս 400, զպարտաւորս և զանպարտս խեղդեցին: Եւ ի վերայ սորա հրաման եղև յարքայէ տաճիկ կանանց զգենուլ ֆէրածէ փոքր եախայով ի գունոյ միայն կանաչ և կարմիր և դեղին և ֆստըխի և ոչ այլ գոյն: Իսկ յունաց և հայոց կանանց զգենուլ ֆէրածէ սեաւ առանց եախայի, և չէտիկ փապուճ կարմիր, ընդ որ ոմանք դժուարացան, և բազումք ի ծաղր և ի ծանակ համարեցան վասն անսովորութեան իւրին:...

Յամի տեառն 1759. հոկտ. 19	*Ծառայ անպիտան և անարժան*
ի Կոստանդինուպոլիս	*Հ. Իգնատիոս Վ. Մխիթարեան*

ՄԻԴ.

Խիստ ու տարօրինակ հրահանգներ կը տրուին ի Պոլիս՝ Հայոց, Յունաց և Հրէից՝ ագանելեաց մասին:

Գերամեծար Գերյարգելի Աբբայհօր մերոյ Ստեփաննոսի վարդապետի որդւոյն

Թուղթ ձԺԶ

... Յաւուրս ինչ նախ քան զելս հալածանացս՝ եղ ի թագաւորէ երկրիս եասախ մեծ, զի կանայք հայոց և հռոմոց մի զգեցցին դեղին չէտիկս և բապուճս. և այժմ ամենայն կանայք կարմիր, կամ սեաւ չէտիկս և բապուճս ագանին. և մի ի հայ կանանց վասն ագանելոյ զդեղին իբրև ներկայացաւ առաջի մեծաւորաց, ուրացաւ յերկիւղէն